Քննությունների արդյունքների հրապարակում

Երեք քննության նախնական արդյունքները հրապարակվում են (անհատապես՝ էլ. փոստի միջոցով) հուլիսին:

Երեք քննության գումարային արդյունքի հիման վրա հայտնի են դառնում **հարցազրույցի փուլ** անցած աշակերտների անունները: Հարցազրույցի փուլ անցնում են այդ գումարային արդյունքով ընդհանուր դիմորդների մեջ որոշակի միավոր (անցողիկ շեմ) և ավելին ապահոված դիմորդները: ԸՀ-ն հրապարակում է այդ միավորն արդյունքների հետ միասին: Հանձնաժողովն ազատ է սահմանելու այնպիսի միավոր, որն առավել արդյունավետ կլինի հարցազրույցների փուլն անցկացնելու համար: ԸՀ որոշումը ենթակա չէ քննարկման և փոփոխության:

Քննությունների արդյունքների բողոքարկում

Յուրաքանչյուր քննության ավարտից հետո դպրոցի կայքում հրապարակվում են տվյալ քննության քննական հարցաթերթը, ինչպես նաև դրա գնահատման չափանիշները:

Նախնական արդյունքների հրապարակումից հետո՝ 48 ժամվա ընթացքում, բոլոր այն դիմորդները, որոնց կանխատեսումները և իրական գնահատականը չեն համընկել, կարող են բողոքարկել արդյունքները:

Քննությունների արդյունքները բողոքարկելու համար անհրաժեշտ է ներբեռնել և լրացնել բողոքարկման դիմումի ձևաթուղթը և ուղարկել այն admissions@dcs.am էլփոստի հասցեին:

Ձևաթղթում պետք է նշել տվյալ քննության համապատասխան առարկայի միայն այն հարց(եր)ի համար(ներ)ը, որի միավոր(ներ)ը ցանկանում եք բողոքարկել:

Անհրաժեշտ է լրացնել դիմորդի անունը, ազգանունը, դիմումը ներկայացնելու ամսաթիվը, համապատասխան առարկայի քննաթերթիկում բողոքարկվող հարց(եր)ի համար(ներ)ը, տվյալ հարց(եր)ի համար դիմորդի կանխատեսված միավոր(ներ)ը և դիմորդի՝ տվյալ հարց(եր)ի համար վաստակած միավոր(ներ)ը:

Բողոքարկման դիմումները ստանալուն պես դրանք փոխանցվում են քննական կենտրոնի համապատասխան առարկայի մասնագետների խմբին:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ: Հարցերի միավորները կարող են փոփոխվել միայն առարկայական մասնագետների խմբի միաձայն որոշմամբ, եթե՝

- միավորների գումարային հաշվարկում սխալ է հայտնաբերվել,

- հարցի ձևակերպումը հստակ չի եղել, և արդյունքում պահանջը ճիշտ չի ընկալվել,
- հարցին կարելի էր պատասխանել այլընտրանքային եղանակով:

Առարկայական ծրագրի անհամապատասխանության կամ թեմայի չիմացության հետ կապված հարցերը վերանայման ենթակա չեն:

Բողոքարկման արդյունքների մասին կտեղեկացվեք գրավոր՝ էլեկտրոնային նամակի միջոցով:

Եթե դիմորդի միավորը որևէ քննությունից բարձրանում է, և դիմորդը ներառվում է հարցազրույցների փուլում, ապա նրա միավորը համապատասխանաբար փոխվում է: Եթե դիմորդը չի անցել հարցազրույցների փուլ, սակայն բողոքարկման արդյունքում միավորը բարձրանում է այնքան, որ հավասարվում է հարցազրույցների փուլ անցած դիմորդների ցուցակում եղած նվազագույն միավորին կամ գերազանցում այն, ապա այդ դիմորդը ներառվում է հարցազրույցների փուլ անցած դիմորդների ցուցակում: